

Ս.ԳԵՋՁԱՆ, Հայկական ճարտարապետություն. Մատենագիտություն.
հ.Ա. Հնագույն շրջանից մինչև 1920թ.: Խմբ.՝ Մ.Հասրաթյան, Հակոբ
Մեղապարտի անվ. տպագրատուն, Ե., 1997, 313 էջ:

1960թ. Հայաստանի ազգային գրադարանում (նախկինում՝ Պետական գրադարան) ստեղծվեց «Հայաստան» բազմաթիվատիկ քարտարանը, որը տպագիր նյութերով համալրող մատենագետներին հատկացվեցին որոշակի բաժիններ (թեմաներ): Հետագայում այդ թեմաներով կազմվեցին մատենագրություններ: Այդպես ստեղծվեց նաև «Հայկական ճարտարապետություն» գիրքը, որը կազմել է՝ ՀԱԳ ազգային մատենագիտության բաժնի գլխավոր մատենագետ Ս.Հ.Գեջյանը: Գրքի խմբագիրը և ակնարկի հեղինակն է ճարտ. դ-ր Մ.Մ. Հասրաթյանը:

Ձևայած Հայկական ճարտարապետության ուսումնասիրվածությունը (ապացույց՝ գրախոսվող գիրքը), բավական նոսր է նրա մատենագիտական դաշտը. «Ցուցակ Թ.Թորամանյանի մինչև այժմ հրատարակված աշխատությունների» (1942), «Ռ.Խրայեյանի հրապարակումները» (1982), հանձնարարական գրականության ցանկեր՝ «Հայկական ճարտարապետություն» (1970), «Հայրենի երկրի ճամփաներով» (1974), կենսամատենագրություններ՝ Иосиф Абгарович Орбели (1957), Նիկողայոս Յակովլևիչ Մառ (1965), Ալեքսանդր Թամանյան (1978), Վարազդատ Մարտիրոսի Հարությունյան (1974, 1982), Բաբկեն Նիկողայի Առաքելյան (1984), հայ ճարտարապետության և հնագիտության ուսումնասիրությունը նվիրված հեղինակների մենագրություններին կից «օգտագործված գրականության ցուցակները»: Ահա այն ամենը, ինչ կար մինչև գրախոսվող գիրքը:

«Հայկական ճարտարապետություն» մատենագիտությունն ընդգրկում է հնագույն ժամանակներից մինչև 1920թ. ընկած ժամանակաշրջանին վերաբերող գրականությունը՝ գրքեր, հոդվածներ, գրքերին կից գրախոսականներ՝ լույս տեսած 1678, 1830 – 1986թթ., հայերեն, ռուսերեն և արևմտահայերեն լեզուներով, այբբենական կարգով դասավորված երեք առանձին բաժիններում. սկզբում տրված են գրքերը, ապա՝ հոդվածները:

3500 անունի հասնող գրականությունը ներկայացված է հետևյալ թեմաներով՝ ա) քաղաքաշինություն, ճարտարապետական կառույցներ, բ) ճարտարապետական հարդարանք, կոթողներ, գ) ճարտարապետներ, քարգործներ և կերպարվեստի վարպետներ, դ) ալբոմներ, ուղեցույցներ, ֆոտոակնարկներ, ե) պատմիչներ, զ) պատմական ուսումնասիրություններ, է) վիմագրություն, ը) միջազգային գիտաժողովներ:

Մատենագիտության մեջ ընդգրկված գրականության հեղինակային համապատկերը ներկայացնում են՝ ճարտարապետներ, հնագետներ, վիմագետներ, ազգագրագետներ, պատմիչներ, պատմաբաններ, աշխարհագրագետներ, ճանապարհորդներ, ձեռագրագետներ:

Բացված բովանդակությամբ ներկայացված են՝ Հայաստանի Ազգային ակադեմիայի Արվեստի, Հնագիտության և ազգագրության ինստիտուտների աշխատությունները (1, 46, 49), «Հայկազյան հայագիտական հանդեսի» հատորները (48), սակայն չգիտես ինչու՝ ներկայացված են նաև առանձին

* Փակագծերում նշված թվերը ներկայացնում են մատենագրության բովանդակած նյութերի հերթական համարները:

Հոգևածներով (294, 295, 464, 832 - 834, 2885, 2994, 3030), Հայկական Սովետական Հանրագիտարանի ճարտարապետական հուշարձաններին նվիրված հոգևածները (51), Հայաստանում տարբեր տարիներին կատարված դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գեկուցումների թեզիսները (53 - 56), ՀԱԱ Արվեստի ինստիտուտի, Մաշտոցի անվ. Մատենադարանի, Ազգային պետ. թանգարանի կոնֆերանսների նյութերը (57 - 60): «Հնագիտական պեղումները Հայաստանում» խորագրի տակ ներկայացված են Կարմիր բուրեղի, Գառնիի, Ջրվեժի, Դվինի, Արտաշատի պեղումների արդյունքները (79): Բացված բովանդակություն ունեն «Ազգային մատենադարան» մատենաշարով Վիեննայում լույս տեսած՝ Հայաստանի և Արցախի վանքերին նվիրված հեղինակային գրքերը (1536 - 1540), Վենետիկի Միսիթարյանների աշխատությունները (1469 - 1476), Վիեննայում, Գ. Կյուլպենկյան հիմնարկության հայկական մատենաշարով լույս տեսած՝ Հայաստանի բերդերին նվիրված աշխատությունը (1514), էջմիածնի միաբանների ուղևորությունների և ուսումնասիրությունների բովանդակությունները (1111, 1114, 1127, 1140):

Ռուսերեն գրականության հատվածում բացված բովանդակություն ունեն *ԽՍՀՄ ԳԱ Հնագիտության ինստիտուտի հրատարակած "Археологические открытия" գրքերը (1964 - 1974) ԽՍՀՄ ԳԱ Ճարտարապետության պատմության և տեսության ինստիտուտի "Архитектурное наследство" հոգևածների ժողովածուն (1975) ԽՍՀՄ ԳԱ Անտիկ հնագիտության բաժանմունքի, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի՝ "Всесоюзный симпозиум по проблемам эллинистической культуры на Востоке" գեկուցման թեզիսները (1984) և այլն:*

Ռուսական գրականությունը ներկայացված է երկրագիտական գիտական ընկերությունների և հիմնարկությունների պարբերականների հոգևածներով, ինչպես՝ "Сборник материалов для описания местностей и племен Кавказа (Кавказский учебный округ)" (2144, 2163, 2265, 2310, 2343...) և այլն:

Արևմտաեվրոպական գրականության հատվածում բացված բովանդակությունները ներկայացված են Հայաստանի միջնադարյան ճարտարապետությանը նվիրված՝ Միլանում լույս տեսած 14 գրքուկ (2820) և 30 գիրք (2797, 2858), Լոնդոնում, Փարիզում, Պետերբուրգում, Տյուբենգենում հրատարակված հոգևածները: Չեն բացված Ղ. Ալիշանի (3207), Հ. Ֆ. Լինչի (3124) աշխատությունների բովանդակությունները:

Ցավոք, կազմված չէ «Կուրեկտիվ հեղինակներ» կոչվող ցանկը, որն ամբողջական պատկերացում կտար մատենագիտության մեջ ընդգրկված գիտական հիմնարկությունների հրատարակությունների, նրանց կողմից հրավիրված գիտական նստաշրջանների, կոնֆերանսների, գիտական արշավների, պարբերական հրատարակություններն իրականացնող գիտական ընկերությունների մասին:

Մատենագետն աշխատել է ամենահնարավոր ձևերով՝ ժողովածուների, հեղինակած գրքերի և հոգևածների բացված բովանդակություններով, համառոտ ծանոթագրություններով, գրքերին նվիրված գրախոսականներով ներկայացնել ընդգրկված գրականությունը: Վերահիշյալները, բացի ճարտարապետական կառույցների մասին ցայտուն պատկերացում տալուց, նպատակադրված են նաև օժանդակ ապարատի՝ «բանալի» կազմելուն:

Շատ ճիշտ է մատենագետի մտահղացումը՝ ընդգրկել Հայ պատմիչների երկերը, բայց ավելի մանրամասնելու պայմանով, չէ՞ որ ճարտարապետները այս կամ այն հուշարձանի իրենց ուսումնասիրությունն սկսում են պատմիչներից տեղեկություններ քաղելով: Ջարմանալի է, բայց փաստ, պատմիչների երկերի թարգմանությունների (բացի ռուսերենից) բացակայությունը, չնայած բովանդակության մեջ նշված է «Historians»-ը:

Մատենագիտությունն արժևորվում է նաև տեղեկատվություն սպառողի բազմաթիվ հարցերին պատասխանելու կարողությամբ, որը տալիս է «բանալին»: Բազմաբովանդակ տեղեկություն է պարունակում այս մատենագիտության եռալեզու՝ «Տեղանունների և ճարտարապետական հուշարձանների ցանկը», որը այս գրքի ապոթեոզը կարելի էր համարել, եթե չլիներ որոշ բացթողումներ: Այբբենական դասավորությամբ նշված են ոչ միայն տեղանունները, այլև նրանց տարածքում գտնվող ճարտարապետական կառույցները, օրինակ՝ Անի-եկեղեցի 1449 (Առաքելոց), 1396 (Արքունական), 99 (Գետնափոր)...., Անի - կամուրջներ, Անի - միջնաբերդ: Այստեղ բացակայում է միօրինակությունը. տեղանունների մոտ ոչ բոլոր դեպքերում է նշված կառույցի անունը, օրինակ՝ Եղվարդ, Կարս, Շուշի, Տայք և այլն: Ճարտարապետական կառույցների մոտ այբբենական հերթականությամբ նշված են այն վայրերը, որոնց տարածքների վրա դրվում են այդ կառույցները. օրինակ՝ Ս.Աստվածածնի եկեղեցի 101 (Ալուշալու գյուղում), 1420 (Ամարասի), 1071 (Ղրիմում), 1156 (Նոր Զուղայում), 1105 (Վանում), 1220 (Տաթևում) և այլուր, և պետք է փնտրել Աստվածածնի տակ: Կան դեպքեր, երբ բնակավայրի մոտ բացակայում է ոչ միայն կառույցի անունը, այլև նրա հերթական համարը. օրինակ՝ Ատրպատականի մոտ նշված չէ Ս.Թադեի վանքը (446), իսկ հաճախ էլ ճարտարապետական կառույցի մոտ բացակայում է ոչ միայն տեղանունը, այլև նրա համարակալումը. օրինակ՝ Ս.Աստվածածնի վանքը Մշահալում, Ս.Լուսավորչի վանքը Օձտեղիում, Ս.Աստվածամոր վանքը Քյարխանայում և այլն: Որոշ դեպքերում էլ ճարտարապետական կառույցը հանդես է գալիս տեղանվան հետ. Օրինակ՝ Ֆոնուզի Ս.Կարապետի վանք (1690), իսկ հերթական համարը բացակայում է կառույցի մոտ: Կամուրջ կառույցի մոտ նշված են այն գետերը, որոնց վրա դրանք կառուցված են, բայց կան բացթողումներ (73, 1131): Նույն բացթողումները առկա են նաև օտարալեզու հատվածներում:

Կարելի էր նշված բացթողումները զանց առնել, որովհետև այս մատենագիտության համար առաջնահերթությունը ոչ թե բնակավայրն է, այլ ճարտարապետական կառույցը: Բայց, քանի որ Հայաստանին նվիրված գիտաօժանդակ մատենագիտությունները շատ չեն, ուրեմն այդ բացը պետք է լրացնեն հրատարակվող թեմատիկ (ճյուղային) երկրագիտական մատենագիտությունները և, որքան հնարավոր է, դրանք հարստացնեն տեղանուններին վերաբերող նյութերով:

Եթե բացթողումները կարելի է վերագրել նյութի մեծ ծավալին, ապա նկատարագրության կանոններից (Госм. 7.1 — 76. М., 1977) չեղվելը ոչ մի արդարացում չունի: Մատենագիտության կազմողը հանդես է գալիս տիտղոսաթերթով և ոչ թե գրքի խորագրերով: Բովանդակության նկարագրության մեջ անթույլատրելի է բառաշրջումը (использование), ինչպես արված է 1, 52, 54 և մյուս ժողովածուներում: Բառաշրջվում է միայն մատենագիտական նկարագրության խորագիրը: Երկլեզվյան (Հայ. և ռուս.) տեքստերով Հայ արվեստին, ճարտարապետությանը և մշակույթին նվիրված հանրապետական գիտական կոնֆերանսները (57 — 60), որպես առանձին

գրքեր, հանդես՝ են եկել նաև ռուսական հատվածում (2045 - 2048), նույն սխալն առկա է նաև 983, 986, 1485, 2064, 2467, 2618 համարներում: Նման դեպքերում պետք է կիրառվեն միայն հղիչներ: ՀիՄՀ տարբեր տարիներին դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված երկրագիտական գեկուցումների թեգիսները (53 - 56) չեն արտացոլված ռուսական հատվածում: Տարակուսանք են առաջացնում հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ սիմպոզիումի թեգիսների (3270) և նրանց օտարալեզու առանձնատիպերի (3277, 3285, 3287, 3289, 3296, 3308, 3311, 3326, 3331, 3333, 3340, 3346, 3360, 3362, 3387, 3388, 3397, 3406, 3412, 3421, 3425, 3435, 3436) հրատարակության տարեթվերը, որովհետև հիմնական նկարագրության մեջ չի նշվել, որ սիմպոզիումը տեղի է ունեցել 1978թ. սեպտեմբերի 12 - 18-ին: Չկան ճարտարապետության և հնագիտության գծով պաշտպանված մատենախոսությունների սեղմագրերը. միջին բոլոր մատենախոսություններն են գրքեր դարձել:

Օժանդակ ապարատը գլխավորում է անվանացանկը, և չգիտես ինչու՝ այն անվանվել է անձնանունների ցանկ (персоналия): Հեղինակների տարբեր գրությունների հետևանք է նրանց՝ տարբեր տեղերում լինելը. օրինակ՝ Տեր-Մովսեսյան Մ., Տեր-Մովսեսյան Փ. կամ Ֆ. (1187), որը նշված չէ, կամ Ter-Movsesian M., Ter-Movsesiantz P.: Նշվածների՝ նույն հեղինակը լինելը հաստատում է Գ.Տեր-Վարդանյանի «Մեսրոպ մագիստրոս արքեպիսկոպոս Տեր-Մովսեսյան» գիրքը (Ե., 1999): Նույնը՝ Կարապետյան Ս., Կարապետյան Ս.Գ., որը հանդես է եկել միայն հոդվածներով (431 - 437, 639, 923): Ափսոսանքով պետք է նշել, որ Ս.Կարապետյանի ուսումնասիրությունները («Բուն Աղվանքի Հայերեն վիճագրերը», «Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում»), իրենց հրատարակության տարեթվերով (1997, 1999), չեն մտել սույն մատենագիտության մեջ:

Հայկական ճարտարապետությունը, ինչպես և նրա մատենագիտությունը, շատ առարկայացված է (տե՛ս «Տեղանունների և ճարտարապետական հուշարձանների ցանկը»): Ընդգրկված հարուստ զրականության մասին էլ ավելի լավ պատկերացում կարող էր տալ «Այբբենական-առարկայական ցանկը», որը, ցավոք, չի կազմվել:

Գրքի հովանավորն է Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի վարիչ-քարտուղար Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանը:

Այս մատենագիտությունը հայկական ճարտարապետության ուսումնասիրվածության վկայությունն է, նրա փաստաթուղթը: Նյութական մշակույթին նվիրված և ոչ մի մատենագիտություն երբեք ժամանակավրեպ չի կարող լինել: Նա կծառայի տեղեկատվություն սպառող բազմաթիվ սերունդների: Մատենագիտությունը ներկայացվելիք պահանջներից նշված և չնշված շեղումներով, բացթողումներով և անճշտություններով հանդերձ, այս մատենագիտությունը՝ նյութի ընդգրկմամբ, հանրագիտարանային բնույթի է:

Գրախոսվող գիրքը Հայաստանին նվիրված գիտաօժանդակ մատենագիտության այն օրինակներից է, որին ծանոթանալով՝ տեղեկատվություն սպառողը հպարտության զգացում է ապրում Հայաստանի, նրա պատմության, հայ ժողովրդի ստեղծագործ մտքի, կառուցողական հանճարի հանդեպ: Այսպիսի մատենագիտությունները դարեր են ապրում:

Մ.Հ.ԲԱԲԱՅԱՆ